Բ. ՏԱՐԻ — ՆԻՒ ԵՈՐՔ ՆՈՅԵՄԲԵՐ 15 1892 — ԹԻՒ 22

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՅ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ — Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 Թալէր կամ 10 Ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

En'ered as seccond-class mail matter. at P.O.NewYork NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արտասահմանի Հայոց Ընկերային Զարգացումն. Թէ Հայք կարող են իրենք զիրենք կառավարել.— Տփղիսի Հայ Լրագրութիւնն և Հայերէն Լեզուն.— Պատրիարք Աշըգեանի նոր Կոնդակն.— Նամակ Ճավայէն.— Միութիւն.— Առ Խրիմեան Հայրիկ, Նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց.— Տեղական Լուրեր.— Ազգային Լուրեր.— Քաղաքական Լուրեր։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

ԹԷ ՀԱՅՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԵՆՔ ԶԻՐԵՆՔ ԿԱՌԱՎԱՐԵԼ

Ա.

Պանդխտութիւնն և գաղթականութիւն Հայոց համար հարկաւոր չարիք եղած են դարերէ ի վեր. այդ չարիքէն բարիք հանել կը լինի հայկական իմաստութիւն։

Այդ չարիքէն բարիք հանել շատ կարելի է։ Գաղթական Հայերու շատք կը գտնուին քան զիրենք աւելի զարգացեալ ժողովրդոց մէջ, ինչպէս ի Ֆրանսա, յԱնգլիա, յԱմերիկա, յԱւստրիա, ուստի և պատեհութիւն ունին նպաստաւոր միջավայրէն օգտուելու, արհեստից, ուսման և բարեկրթութեան մէջ նշանաւոր յառաջդիմութիւն ընելու։ Իսկ այն Հայեր որք ի Պուլկարիա, ի Ռումանիա, յԵգիպտոս և ի Հնդկաստան հաստատուած են, թէև այնքան զարգացած քաղաքակրթութեան օրինակներ չունին առջի, սակայն ին մեծ մասամբ կը վայելեն ազատութիւններն այնպիսի միջավայրից որք անտեսական և քաղաքական տեսակէտով շատ գերազանց են քան զԹիւրքահայ գաւառացն։

Կան կեանք սակայն որոց մասին օտար միջավայրն աննպաստ է գաղթական Հայոց. այդ աննպաստ կեանքու մին քննել և զարմանն նշանակել է ներկայ յօդուածի նպատակն։

Բ

Գաղթական Հայոց մէջ կայ չնչին փոքրամասնութիւն մի որ գտնուած երկրին քաղաքացին եղած է և իբրև այնպիսի կը մասնակցի քաղաքացւոյ պարտուց և իրաւանց։ Այդ կարգէն պատկանողք ընդհանրապէս կամ օտարացած են արդէն Հայութենէ կամ օտարանալու ուղղութեան մէջ են։

Գաղթականաց ստուար մեծամասնութիւնն կապրի այնպիսի պայմանաց մէջ յորս չկատարեր քաղաքային և ընկերային պարտքերն ոչ իբրև քաղաքացի իւր մայր հայրենեաց, յորմէ հեռի է, և ոչ իբրեւ քաղաքացի օտար երկրին ուր նստած է։

Մայր Հայրենեաց մէջ սով, համաճարակ ախտեր, պատերազմ, հրդեհ և ողողմունք կը պատահին, բայց ինքն հեռուէն ոչ կ'իմանայ, և ոչ ալ, եթէ իմացունեն, օգնել կը փութայ։ Մայր հայրենեաց մէջ դպրոցք, եկեղեցիք, հիւանդանոցք և որբանոցք կան, բայց ինքն հեռուէն կարող չէ հոգաբարձուի, եկեղեցպանի, խորհրդականի պաշտօններ վարել, և ոչ ալ դրամական նպաստիւք օգնելու շատ բաղձայող է։

Նոյնպիսի հաստատութիւններ շատ կան նաև օտար երկրին մէջ ուր ինքն կ'ապրի, բայց իբրեւ օտարական ոչ մեծ շահ կը ըզգայ դոցա օգնելու մէջ, և ոչ ալ այնքան սերտ ընկերային յարաբերութիւններ ունի որ իրմէ օգնութիւն սպասողներ և խնդրողներ լինին։

Այս պայմանաց մէջ գաղթական Հայերու մեծ մասն իբրև քաղաքացի զարգանալու և կրթուելու պատեհութիւն գրեթէ չունին, ինչ որ մեծ դժբաղդութիւն մ'է։

Գ.

Այդ դժբաղդութիւն անդարմանելի չէ սակայն։

Եւ յիրաւի ուր որ հայ գաղթականաց թիւն բաւական ստուարացած է, անդ հայ ընկերակցութիւններ կազմուեր են, և ուրեք ուրեք հայ եկեղեցի, դպրոց, ընթերցարան, գրադարան են. ստեղծուեր են։ Մանաւանդ վերջին տարիներս հայրենասիրական արթնութիւն մի գրեթէ ամենայն Հայ գաղթականութեանց մէջ տարածուած լինելով, Հայ Հայու աւելի մօտ եկած է, և բազմաթիւ յանձնախմբեր ու ընկերութիւններ հետ զհետէ կուգան ի գոյ, ինչպէս որ գաղթական Հայոց մեծ կէսն արդէն ելած է այն հին առանձնացեալ, կղզիացեալ վիճակէն։

Այս կազմակերպութեանց մեծ մասին նպատակն է մայր հայրենեաց օգտակար լինել. նպատակ յոյժ գովելի, յոյժ բարի։

Բայց այդ նպատակի հետ հաշտելի, մանաւանդ թէ այդմ նեցուկ և թափ տուող ուրիշ նպատակ մ'ալ հարկ է ունենալ—այն է բուն գաղթական Հայոցս կըրթութիւնն իբրև ընկերային արարած, իբրև քաղաքացի։

Եւ մեք կը համարձակիմք ըսել թէ այն դրամական կամ այլ կարգի օգնութիւն զոր մեր գաղթային ընկերութիւններ մերթ ընդ մերթ կ'ընեն մայր հայրենեաց,

նուազ կարեւոր է քան այն կրթութիւն զոր իրենք կըրնան և պարտին ստանալ իբրև ընկերութեան անդամք։

Ընկերութիւնք բան մի ընելու համար կազմուած են և դան մի կ'ընեն, բայց ինչ որ կ'ընեն այնքան կարեւոր չէ որքան ինչպէս կ'ընենն։

Եթէ հոգ տանիմք որ մեր ընկերութեանց ժողովներն ու գործունութիւններն ճշմարիտ միջոց լինին մեր գաղթական Հայերու գոնէ միկ մասն կրթելու, ազնուացնելու, ընկերային յարմարութիւններն զարգացնելու, հաւերաչխութեան ոգին և գործակցութեան ընդունակութիւնն աճեցնելու, հաւատացէք թէ շատ աւելի կարեւոր գործ կատարած կը լինիմք Հայաստանի համար քան այն դրամական և այլ օգնութեամբ զոր կը հայթայթեմք նմա։

Միայն չհասկնաք· դրամական և այլ օգնութիւն հայթայթել մեր հայրենակցաց կամ հայրենասէր գործոց՝ գովելի բան մ'ընել է, պէտք է ընել զայդ· բայց աւելի մեծ ու գովելի բան մի կայ զոր եւս պարտիմք նոյն ատեն ընել —այն է Հայրենեաց համար զարգացած և բանիմաց քաղաքացիներ պատրաստել.... մեք զմեզ։

Հայրենիք իւր զաւակներ յեսոս պիտի կոչէ ժամանակ մի յետոյ՝ երբ լաւագոյն վարչութիւն մի հաստատուի անդ, և մեք գաղթականքս պարտիմք տանիլ մեզ հետ Հայաստանի Մօր ընծայ շատ արհեստներ ու գիտութիւններ և սակի, և մանաւանդ մեք զմեզ պարտիմք ներկայացուցանել Նմա իբրև սիրայօր և զարգացած զաւակունք։

Մայրն մեր թող ուրախանայ տեսնելով մեր կրթութիւն և քաղաքային հաստատ առաքինութիւններ որք բիւր անգամ աւելի թանկ և աւելի փրկաւէտ են քան սակի ու արծաթ։

Դ

Արդ, ի՞նչ պայմանօք կարելի է ընկերութիւնները ծառայեցուցանել մեր կրթութեան։

Առաջին պայման այն է որ ընկերութեան ժողովներն նկատուին իբր դարձնական դաս ընկերային բարեկրթութեան։

Երբ ժողովոյ մէջ խնդիր կամ առաջարկ մի յառաջ բերուի, ամեն անդամ ազատ է վիճաբանութեան մասնակցելու, եւ եթէ տեսնողներն տեսնախօսներուն և բոլոր ժողովականաց յարգել տայ խորհրդարանական օրէնքներն, ամեն անդամ յատակ և ամփոփ կերպով իւր միտք բացատրելու, տրամաբանելու, մտադիր ունկնդրելու կը վարժուի, և որ աւելի է, ուրիշի խօսքն յանդէպս չընդհատելու, քաղաքավար եղանակաւ առարկութիւն ընելու և առարկութիւն ընելու, իւր լեզուն սանձելու և իւր կիրք կառավարելու, տեսնողաց հրաւիրմամբ ի կարգ դալով լռելու կամ անվայել բացատրութիւն մի յետոյ կշռելու և ուրիշ շատ ազնուական և շնորհալի կերպերու կը կրթուի կ'ընտելանայ։

Եթէ ընկերութիւն մի այդպիսի բարեկրթութեան վարժարան հանդիսանայ, արդէն գոյութեան իրաւունք կ'ունենայ և յոյժ գովելի ծառայութիւն մատուցած կը լինի։

Ընդհակառակն եթէ անդամոց սմանց անյարմարութեան կամ տեսնողաց ապիկարութեան պատճառաւ օրէնքներն չյարգուին, եթէ օրինաց կոխտրիչք և կարգաց խանգարիչք ի կարգ չբերուին, յայնժամ ժողովներու մէջ խօսելու սեղ կը պառաւ և փաստի գէմ բաւոց իսկ կը ցուցնեն ժպրհագայնք, և ընկերութիւնն կը լինի վարժոց ամօթալի անկրթութեան։

Ե

Աւելի դժուար, մանաւանդ Հայոցս համար յոյժ դժուար պայման մ'ես կայ ընկերութիւնն քաղաքային կրթութեան ծառայեցուցանելու— այն է արդարութիւնն պաշպանել և գործադրել ընկերութեան վէճերուն մէջ։

Մեր ազգին դէմ ծանօթ ամբաստանութիւն մ'է թէ քաղաքային առաքինութենէ և կրքովէ զուրկ եմք, և մեր ընկերութիւնք զայդ լիովին կ'ապացուցանեն։

Ընկերութիւնն ալ հանրապետական պետութեան մանրանկար մ'է և կրնայ նկատուիլ իբրև նախատիպ մի ուր ժողովուրդն ի հանդէս կը բերէ ինքզինք կառավարելու ընդունակութեան չափն։

Ի՞նչպէս կընարուին այս ինչ ընկերութեան անդամք և պաշտօնեայք, ի՞նչպէս կը կատարուին ժողովներ և վիճաբանութիւնք, ի՞նչպէս կը գործեն պաշտօնեայք և յանձնախումբք, ի՞նչպէս կը վարձատրուին արժանաւորք և ի՞նչ բարոյական պատիժ կ'ընդունին անհաւատարիմ պաշտօնեայք և խանգարիչք ու խռովարարք —գիտցիր թէ ոչինչ պիտի լինէր եթէ այդ ընկերութեան անդամներով և իրենց նմանեաց մեծագոյն բազմութեամբ կազմուէր հանրապետութիւն։

Եւ եթէ ընկերութեան զարգացեալ և յառաջադէմ յամարուած փոքրամասնութեան մէջ ալ չգտնուին այնքան կորովի ազէր մարդիկ որք օրինաց պաշտպան կանգնին անվեհեր, գիտցիր թէ այդ ազգն ոչ թէ հանրապետական այլ իշխանապետական անդամ կառավարութեան մի հարկաւոր եղած կորովի քաղաքացիներն և պաշտօնեաներն հայթայթելու պատրաստ չէ։

Ընկերութիւն, կառավարութիւն, զարգացումն անհնար է առանց արդարութեան։ Նոյն իսկ անասնային ընկերութիւնք ունին իրենց պատժական օրէնք, զորս դարձադրելով կը պաշտպանեն իրենց գոյութիւն և բարօրութիւն։

Վայրի փղերու երամակներն իրենց մէջէն կ'արտաքսեն խեռ և չ'բաճի անդամն, որ առանձին թափառելու կը դատապարտուի։ Նոյնն կ'ընեն նաև գոմէշներու երամակք։ Թռչունք ալ արդարութիւնն ի գործ դընելու մէջ խիստ են. եթէ անծեղ մի իւր դրացւոյ բոյնէն ճիւղ գողնայ, բոլոր այդ ընկերութեան անծեղներն միասին կը յարձակին կը քակեն զոյն բոյնն։ Դիտուած է թէ ագռաւներն կանոնաւոր ժողովոյ մէջ կը դատեն ու կը դատապարտեն յանցաւոր անդամն. մին կը խօսի նախ, յետոյ ուրիշներ, յետոյ ամբաստանեալն և վերջապէս ամենն կը կռկռան ու յարձակելով մեղապարտ ագռաւին վերայ, կը սպաննեն զնա չարաչար։(1)

Հայ Ընկերութեանց մէջ տեսած էք այդքան արդարութիւն։ Փորձա՞ծ էք երբէք յարդարել ընկերութիւն մի որ անկիրաւութեամբ նշանաւոր հանդիսացած և անուղղայ անդամ մի, ճշմարիտ վէրք մի, կարէ դուրս ձգէ։ կամ պատահա՞ծ է երբէք որ ընկերութեան անդամակցելու առաջարկուած անուններն քննելու և տեղեկագրելու պաշտօն ունենալով՝ այս ինչի անունն՝ ծանօթ պատճառաւ՝ չկրնաք յանձնարարել։ Եթէ փորձառու եղած էք, գիտէք թէ ի՛նչ զարմացական բացագանչութիւններ կը լսէք ժողովոյ մէջ և մանաւանդ ժողովէ դուրս. «ի՛նչ, անդամ մ'արտաքսե՛լ,» «այս ինչն անդամ ընդունելու անյարմար է ըսե՛լ...։» «Բայց, ընկե՛ր, դու գիտն և զմիւսն արժանաւոր կը համարի՞ս անդամակցութեան։» «Ո՛չ, գիտեմ թէ անարժան են, բայց այդպիսի բան կըսուի՞ ժողովոյ մէջ...։»

Ե՞րբ մեք Հայքս ալ պիտի հասկնանք թէ արդարութեան սէրն այժ է, և այդ սիրոյ վերայ կազմուած միութիւնն իսկ է զօրութիւն։

Դիտեցէք, թռչուն մի անիրկիւղ կը յարձակի իւր բոյն քակելու եկած աւելի մեծ և սեժով տեսակէ թռչնոյն վերայ, և սա, գիտակից իւր անիրաւութեան, կը փախչի առանց դիմադրել փորձելու։

(1) Տես Herbert Spencer-ի Justice գրքին Animal Ethics (Անասնային բարոյախօսութիւն,) և Sub-human Justice (ենթամարդկային արդարութիւն) գլուխներն, նաև նոյն գրքին 267—286 երեսներն Անասնային Խղճի վերայ։

Եթէ մեր մէջ անիրաւն թշնոյ չափ խիղճ չունի իւր սկրութիւն զգալու և քաշուելու համար, պատճառն այն է որ թշնոյ չափ արդարասիրութիւն ունեցող վեհ մարդիկ չկան որ անիրաւին վերայ ամենահարբար յարձակին և զգաստացունեն զնա, —որ փառաւորապէս կանգնին արդարին պաշտպան և աշխարհին բարոյական զօրութեամբ սանկացունեն ապիրատն, դողացունեն բովանդակ ընկերութիւնն և գործնական դասեր տան փրկուէս : Այդպիսի սքանչելի երևոյթներ յաճախ տեղի կ'ունենան մեր չուրջ գտնուող քաղաքակիրթ ժողովրդոց մէջ, իսկ առ մեզ հազիւ երբէք անկատար փորձ մի փորձելու յօրութիւնն ունեցողներ կ'երևին :

Զ

Երանի՛ թէ այսուհետև արտասահմանի հայ ընկերութիւնք չմոռնային թէ գերազանցապէս հայրենասիրական գործ կատարած կը լինին եթէ ծառայեն իրենց անդամոց մէջ բարեկրթութիւն և արդարասիրութիւն մշակելու :

Երբ օտարք կը պարսաւեն թէ Հայք չեն փայլիր քաղաքային կրթով և վեհանձնութեամբ, ազգն կը չքմեղեմք թուրք բռնապետութեան սարկացուցիչ ազդեցութիւնն պատճառ բերելով · բայց արտասահմանի մէջ, ազատ կառավարութեանց հովանւոյն տակ ապրող Հայերս ի՛նչպէ՞ս կրնամք մի և նոյն չքմեղանքն մեր մասին ևս յառաջ բերել : Եթէ այսպէս շարունակեմք, չե՞ն կրնար օտարք զմեզ դիտելով, մեր ազատ ժողովներ, մեր ազատ թերթեր դիտելով ըսել թէ ազատութիւնն ալ դարման չէ Հայերուն, —թէ ինչ որ Հայեր կրնան ընել մեր ազատ երկիրներու մէջ, նոյնն պիտի ընեն նաև իրենց երկրի մէջ եթէ ազատութիւն գտնեն ... :

Եւ արդարև կա՞յ բան մի աւելի ծաղրելի և աւելի անգործնական քան արդարութիւնն ոտնակոխ ընողներու ինքնօրէն կամ ինքնավար լինիլն :

Այդ արդար ծաղրն կը հրաւիրեն իրենց վերայ մանաւանդ այն հայրենասէր գործիչ կոչուածներն որք ազգին համար «ազատութիւն» կը խնդրեն և սակայն իրենք քան զամենայն աւելի կը պղծեն հրապարակային խօսքի և տպագրական խօսքի ազատութիւնն · — խղճալի արարածնե՛ր, որք դեռ տարրական գաղափար մ'իսկ չունին թէ ի՛նչ հիմանց վերայ կը հաստատի ազատութիւն, կառավարութիւն, պետութիւն · —ողորմելի՛ գործիչներ, որք թրքային անիրաւութեանց դէմ կը բողոքեն բարձրաղաղ, և սակայն իրենք կը ժըպրհին անիրաւին թևարկու և խաբերային թիկունք լինիլ, և եթէ իրենց հայրենեաց կառավարութեան մէջ պաշտօն վարելու կոչուէին, հին ալ անխոստովանելի պատճառներով պիտի հովանաւորէին զապիրատն, հին ալ ամեն ազատ միջոց պիտի գործածէին ի յաղթել իրենց հակառակորդաց :

«Հայք» յաւխտեան պիտի հարուածէ նոյն ազատէրներն ու սուտ գործիչներն :

Եւ եթէ «Հայք» չյուսահատիր իւր սիրեցեալ ազգի ապագայէն, պատճառն այն է զի հաստատ հաւատ ունի թէ Հայք ընդունակ են արութիւն, կորով, քաղաքային առաքինութիւն և ամեն բարի յատկութիւն կըրթութեամբ ստանալ, և ստանալ քան զամենայն ազնիւ ազգաց հաւասարելու չափ :

* * *

«Արաքս» ազգային հանդէսի ներկայ տարւոյս առաջին թիւն հրատարակուած է ընտիր պարունակութեամբ : Բ · թիւն ալ իմօտոյ լոյս պիտի տեսնէ : Ընթերցողք գիտեն թէ «Արաքս» տարին երկու անգամ կը հրատարակուի, և տարեկան գինն է 3 րուբլի : Հասցէն M. Goulamiriantz, St. Petersbourg, RUSSIE

ՏՓՂԻՍԻ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ

ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

ՄՇԱԿ, ԱՐՁԱԳԱՆՔ, ՆՈՐ-ԴԱՐ

Ա.

Ռուսիա վաղուց ինկած է Եւրոպիոյ մտաւորական շարժման հոսանքին մէջ, և ըրած է արդարև մեծ յառաջդիմութիւն : Թուրքիա, ընդհակառակն, իւր կրօնական դաւանութեան և դարուն յառաջդիմութեան հակընդդէմ ուղղութեանց մէջ իբրև ի բաւղի շուարած կը դառնայ, և եթէ երբեմն կը թուի շարժիլ, այն ալ կրաւորական շարժում մ'է՝ եւրոպեան աշխարհին հոսանաց եզերական ալիքներէն վարեալ :

Բնական էր որ Ռուսահայք տիրող տարրին յառաջադէմ ընթացքէն մեծապէս նպաստաւորէին, և որ Թրքահայք Օսմանցւոց անժարչութենէն ողբալի կերպիւ խոչընդոտէին : Եւ արդարև այդ այդպէս եղած է ու կը շարունակէ :

Ի միջի այլոց, կովկասեան հայ պարբերական մամուլն ցուցիչ է այդ տարբերութեան : Եւ տարբերութիւնն շատ աւելի զգալի պիտի լինէր եթէ ինչ ինչ արտաքին հանգամանք՝ հանդոյն այնց զորս պոլսական լրագրութիւնն կը վայելէ, աւելցունէին տփղիսեան մամլոյն կարևորութիւնն :

Տփղիս քաղաքական և միջազգային դիպուածոց կեդրոն մի չէ ինչպէս օսմանեան մայրաքաղաքն, և ոչ իբրև հայ ազգայնութեան կեդրոն կրնայ նա Կոստանդնուպոլսոյ դէմ ի կշիռ դրուիլ : Սակայն Տփղիսի հայ պարբերական մամուլն երկու մխիթարական առաւելութիւններ կը վայելէ պոլսականին վերայ — Նախ, դրացութիւն ամենայն Հայոց հայրապետական դահուն, Ս · Էջմիածնի, որով և դիւրութիւն ազգային կարևորութիւն ունեցող կարգ մի գործոց վաղագոյն իրազեկ և միջամուխ լինելու · երկրորդ, զհովանին քրիստոնեայ վեհապետի, որով և հայկական հարցից ու թրքական անցից վերայ գրելու յանչափս աւելի ընդարձակ սահման ազատութեան :

Իբր երկու տարիէ ի վեր կ'ընթեռնումք և կը գընահատեմք մեք Տփղիսի ՄՇԱԿՆ, ԱՐՁԱԳԱՆՔՆ, ու ՆՈՐ-ԴԱՐՆ : Շատ որոշ կը տեսնուի թէ դոքա աւելի ողջամիտ ըմբռնումն ունին իրենց դերին քան մեր պոլսական թերթք, որք գլխաւորապէս Պոլսով կը սնանին ու Պոլսով կը զբաղին :

Միայն մէկ տեսակէտով մեր կովկասեան մամուլն ստորին է քան զպոլսականն— լեզուի տեսակէտով : Եւ այս զգալի է ոչ միայն քերականական ուղղութեան այլ և ոճոյ յատկութեանց մասին :

Մեզ կը թուի թէ այդ թերութիւն լոկ դպրոցական ուսմանց անբաւականութեան ընծայելի չէ, այլ անհոգութեան ևս : Եւ ճիշդ այդ պատճառաւ է որ մեք ներկայ յօդուածով կուզեմք լեզուական քննադատութիւն մ'ընել, յորմէ պիտի տեսնուի, յուսամք, թէ ռուսահայ թերթեր կրնան իսկոյն և զգալի աստիճանաւ բարւոքել իրենց լեզուն եթէ մասնաւոր հոգ տանին :

Բ

Նախ պարտիմք յիշել թէ ռուսահայ լեզուին մէջ նշանակելի են քերականական ինչ ինչ երևոյթներ, որք յայտնի գերազանցութիւններ են պոլսականին վերայ :

Ուշադրութիւն գրաւող գլխաւոր երևոյթ մի այդ կարգէն՝ է սեռական արականին ուղիղ գործածութիւնն : Ռուս թերթք կ'ըսեն ծեռքին կայ, տանը մնում է, դպրոցում, և այլն, ուր պոլսական թերթք կ'ըսեն «ծեռքը կայ,» «տունը կը մնայ,» «դպրոցը,» և որ ի կարգին :

Ապաքէն Թրքահայ թերթք ուղղական հոլովն անփոփոխ կը գործածեն այլ և այլ հոլովներու տեղ, ինչ որ քերականական օրինաց դէմ ոճիր մ'է։ Թրքերէնէ ազդուելով Տաճկահայք սկսած են անչուշտ այդ սխալ գործել, բայց աւելի յառաջ գնալով այդ մասին հայ լեզուն աւելի թրքական քան զթրքերէնն իսկ գործածեն։

«Տունը այրեցաւ» (ուղղական) այս ինչ տունը։
«Տունը այրեցաւ»(ուղղական) նորա տունն՝ ըսել կուզէ։
«Տունը այրեց» (հայցական) զտունն՝ ըսել կ'ուզէ։
«Տունը այրեց» (հայցական) զնորա տունն՝ ըսել կ'ուզէ։
«Տունը նոսեր է» (ի նախադրիւ տրականի տեղ)ի տան՝ ըսել կ'ուզէ։
«Տուն գնաց» (ի նախադրիւ հայցականի տեղ)ի տուն՝ ըսել կ'ուզէ։
«Տուն չինեց» (անորոշ հայցականի տեղ։)

Կա՞ր արդեօք ոևէ լեզու որ այդքան բարբարոսաբար չարժի։ Թրքերէնի մէջ իսկ այդ չկայ, ուր էվ, էվի իվինի, էվտէ, էվէ կ'ըսուի։

Կ'արժէ նաև յիշել «ԸԼԼՍ» բառն, զոր երբէք չեն գործածեր ռուսահայ թերթք, այլ միշտ «ԼԻՆԵԼ» որ ուղիղ հայերէն է։ «Ըլլալ»ն, բոլոր ռամկական աղաւաղմանց այդ հիւաղագոյնն, զեռ Թրքահայ լրագրութեան նախընտրեալ ձեւն է...

Գ

Ռուսահայ թերթից աչքի զարնող մէկ պակասութիւնն է օտար, եւրոպեան բառերու անչափաւոր գործածութիւնն։ Ամեն յօդուածի մէջ կը հանդիպիս բազմաթիւ այդպիսի բառերու, և յաճախ կը ստիպուիս կանգ առնելով քննել այս ինչ բառն թէ ո՞ր եւրոպեանին աղաւաղեալ ձեւն է։

Այդպիսի օտար բառերու կարգէն են, օրինակի համար, դեզինֆէկցիա, մինիերալօգ, էպիդէմիա, թն օդրաֆ ֆելիէտօն, կրիզիս, կօնտինգէնտ, ինիցիատիվ, պէրիօդ, օրգիա, խրօնիկա, սկանդալ, պատֆէտ, գիմնազիստ, կապիտալիստ, լեգենտա, կոմետիա, կրիտիկոս, քիմիկոս, ինստինկտ, պրօկուրօր, դերեկտօր, ֆակտօր ևն. ևն.

Զգիտեմք թէ այդպիսի բառերու որքանն Տփղիսի հասարակ ժողովրդեան ծանօթ են և խօսակցութեան մէջ գործածական։ Անհրաժեշտ չէ քաղաքային և վարչական գործառնութեանց և պաշտօններու ռուսական անուններն գործածել, և այն եւրոպեան բառերն ալ որոց հայերէն չկայ և հապճեպով չինել չէ ի դէպ, և ոչ ամեն գրողի գործ։ Կրնան ի հարկէ ըսել պրօկուրօր և խրօնիկա, բայց ի՞նչ հարկ կայ հանքարան, ցեղագիր, տարրարան, ելեմուտ, դրամատէր, նախարար, կատակերգութիւն, բնազդում, նախաձեռնութիւն, տնօրէն կամ վարիչ, գործիչ, ծրագիր, և այլ նմանորինակ հանրածանօթ, լաւ շինուած և լաւ հաստատուած հայերէն բառերուն տեղ օտարներն գործածել։

Ի՞նչ պատշաճութիւն կայ նոյնպէս Ֆրանսերէնէ ռուսացեալ բառերու ծայրն հայերէն ածանցներ կցել և ըսել սօցիալական, սանիտարական, կլասիկական, էսթէտիկական, փոխանակ պարզապէս ըսելու ընկերային, առողջապահական, դասական, գեղեցկագիտական։

«Մշակ» կ'ըսէ։—«...որտեղ ընդունեց պաթօլոգիական անատոմիայի ամբիոնը-» Յայտնի է թէ եւրոպեան լեզուաց անգէտ ընթերցողն բնաւ բան չհասկնար այդ խօսքէն, մինչդեռ եթէ ըսուէր «...Որտեղ ընդունեց ախտաբանական անդամաբանութեան ամբիոնը,» փոքր ի շատէ կ'իմանար թէ ինչպիսի նիւթոց վերայ դասախօսելու ամբիոն ընդունած է։

(Շարունակելի)

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՇԸԳԵԱՆԻ

ՆՈՐ ԿՈՆԴԱԿՆ

Զգիտեմք այս քանի՞երորդ անգամն է որ Սր. Աշըգեան կամայ թէ ակամայ կը նզովէ արտասահմանի հայ գործիչներն ու թերթերն անխիղճ և յախուռն։ Վերջին կոնդակն ուժգնութեան կողմէ կը գերազանցէ նախընթացներն, որպէս կը մակաբերեմք«Փունջ»ի մէկ յօդուածէն, որ սապէս կ'ընթանայ։—

Պատրիարքական կոնդակ մը կը ղրկուի այսօր մայրաքաղաքիս Թաղ. խորհրդարաններն, վաղը եկեղեցեաց մէջ ի լուր ժողովրդեան կարդալու համար։ Առաջիկայ եօթնեկի մէջ ալ գաւառները պիտի ղրկուի։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը տեսնելով որ ժամանակէ մը հետէ քանի մը օտար երկրաց մէջ ազգայնոց ոմանք Հայ ժողովրդեան բազմադարեան բարերարն եղող Օսմանեան կառավարութեան դէմ յախուռն և անխիղճ հրատարակութիւններ կ'ընեն, և Հայ ժողովրդեան սիրող ու նորա իրաւանց ու շահուն պաշտպան ու նախանձադնդիր ձեւանալով՝ կը վնասեն ժողովրդեան, և իւրեանց բուն նպատակն է անձնական շահ, կը յորդորէ ժողովուրդն, բնաւ չանսալ այդ հրատարակութեանց, և բնաւ չհաղորդակցիլ հրատարակչաց հետ։ Նորին Բարձր Սրբազնութիւնն յականէ յանուանէ նշանակելով Մարսիլիոյ Արմէնիա, Լոնտոնի Արմէնի ու Հայաստան, Աթէնքի Հընչակ, Ամերիկայի Հայք, Ազատութիւն ու Արարատ անուններով հրատարակուող թերթերն և նոցա հրատարակիչներն, Բօրթուքալեան, Մինաս Չերազ, Մեղաւորեան, Փ. Այվազեան, Էկինեան, Մ. Ս. Գաբրիէլեան, Մ. Սվազլեան, Կարապետ Յակոբեան և այլ քանի մը անձեր. կը խրատէ զգուշանալ, գիտնալով որ վնասակար են նոքա, և ընդ նզովիւք կը դանուին նոցա թերթերն ու անձերքն։ (Տես «Փունջ» 17 Հոկտ. 1892, թիւ 2329)

Ընթերցողք կը յիշեն թէ անցեալ տարուան կոնդակին մեք պատասխանեցինք նամակաւ մի ուղղեալ և յղեալ առ Սր. Աշըգեան, որ անչուշտ պէտք է հասած լինի Նմա։ Պատճէնն հրատարակեցինք մեր թերթի 1892 Յունվար 1 թուով։ Եթէ Սր. Պատրիարքն «Հայք» չկարդար, գոնէ կարդացած է իրեն ուղղեալ մեր այն նամակ յորմէ կարող էր դատել նաև «Հայք»ի ուղղութիւնն։ Զեմք տեսներ թէ ի՞նչ գտած է մեր թերթի մէջ արժանի բանադրանաց։ Թող Պատրիարքն անիծէ զ«Հայք» որ օրհնեալ է և կ'օրհնուի Հայ ժողովրդեան լուրջ և ազատ մասէն աշխարհի ամեն կողմն։ Ո՛չ գիտի թէ Սր. Աշըգեան ինքն ևս չպիտի օրհնէր եթէ ազատ լինէր...։

Նոր կոնդակին մէջ դիտելու արժանի կէտ մի կայ. դադարեալ թերթերուն ալ հաւասար բաժին հանուած է անէծքէն, ինչպէս Լոնտոնի «Հայաստանին», նաև Նիւ Եորքի «Արարատին» որ ևս 9 ամսէ ի վեր դադարած լինելով՝ միայն երեք ամիս առաջ երկու թիւ ելան ընդմիջել դադարումն, և անկէ ի վեր կը շարունակէ... հանգիստ լռութիւն պահել։ Նոյնպէս յիշուած է Էկինեանի թերթիկն, որ վեց անգամ դադարած եւ վերսկսած էր. և որ 3—4 ամսէ ի վեր դարձեալ դադարած է։

Գուցէ այս իրողութիւնք անծանօթ չեն կոնդակի շարադրողին, որ սակայն ամենն ալ յեշել լաւ համարած է տեսնելով թէ մեր մէջ երևցող թերթիկներ ընդհատ ջերմէ բռնուած հիւանդներու նման են—կը մոլն, կը ջեռնուն և կը քրտնին մի քանի անգամ, ապա երկար տաեն ոչ մոլ կայ ոչ տաքնալ և ոչ կարմրիլ, այնպէս որ ամեն մարդ կը յուսայ թէ բժշկուած են. և ահա օր մի նորէն կը սկսին դողցունել...

Ամերիկայի Հայերն քիչ զոհողութեամբ չճանաչեցին այդ թերթիկներու ախտաւոր գնացքն և զայնդարմանելու կերպն —Առատ պաղ ջուր լեցունել գլխէն ի վար՝ փորձուած դարման է ջերմի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՅԻՆ

Սուրաբայա, 4 Հոկտ․ 1892

Ձեզանէ յատկապէս կը խնդրեմ Ձեր պատուական Թերթի մէջ հետեւեալ տողերն շնորհ արարեալ արտատպել։

Հայրենիք Թշուառ է, հայրենիք յետին տարկուԹեան մէջ կը հեծէ և կը մաշի․ օգնուԹի՛ւն, օգնուԹի՛ւն կ'աղերսէ տառապեալ հայրենիք մեր Հայաստան․ իսկ մեք ի՞նչ կ'անեմք․ գիշեր ցերեկ կը հոգա՞մք և կը փուԹամք ձեռն օգնուԹեան պարզել Նորան— ո՛չ, ո՛չ, գրեԹէ ոչինչ կ'անեմք, այլ ձեռնամած անտարբեր աչօք կը նայիմք նորա օրաւուր բարդուող տանջանացն— յետին տարկուԹեան շղԹայից։

Անօրէն Թրքաց ձեռքում տանջուող հէք եղբարք մեր իւրեանց մեծագոյն յոյսն դրած են արտասահմանի եղբարց վերայ, լաւ գիտնալով որ եԹէ ինքեանք խըլրտիլ փորձեն՝ մահ առ դուրս կայ։ Իսկ արտասահմանում աշխատող պատուելի գործիչք մեր ի՞նչ արդիւնաւէտ և գործնական միջոցների են ձեռնարկել և կը ձեռնարկեն, արտասահմանում բնակուող ընդհանրուԹիւն քաջ ըմբռնե՞լ է իւր ծանր պարտականուԹիւն առ Թշուառ հայրենիս և առ իւր գերի եղբարսն, և կը գործէ՞ ըստ այնմ։ Ո՛չ աւա՜ղ ոչ, գրեԹէ ոչինչ գործնական և լուրջ միջոց եմք ձեռք առած։

Անգործնական են բոլորովին և նպատակին չեն յարմարիլ միջոցքն որով ծյսօր կը գործեմք։ Մինչ ցորս բուական դիմումներ եղան դիւանագիտուԹեանց․ համայն Եւրոպայի քաղաքակրԹեալ ազգերն ճանաչեցին մեր իրաւունքներ և վերջապէս իրաւացի ըններէ և գատաւորներէ չտեսի համակիր՝ համամիտ եղան մեզ։ Սակայն ի վերայ խճղմանանց կը հարցունեմ, ի՞չ շահ, ի՞նչ օգուտ հասաւ հէք Հայաստանին —ոչինչ։

Ի սէր հայրենեաց և ի սէր սուրբ նշխարացն քաջ և հայրենասէր նախնեացն մեր՝ եԹէ մի է նպատակ մեր՝ պէտք է գործեմք խոհեմուԹեամբ և գործեմք միանալով և համերաշխուԹեամբ։

Երբեմն խիստ յուզեալ և խռովեալ էին մտքեր, և աչագին կատաղուԹիւն վրայ կուգար ամեն զգայուն սրտի երբ անխիղճ և անուրտ Թրքաց բարբարոսուԹիւնքն լսէր կամ կարդար, եւ իւր արդար զայրուԹի մէջ պատրաստ էր ամեն ինչ զոհել, ձեռնէն եկածն չխնայել ի սէր հայրենեաց և ճնշեալ եղբարցն։ Այլ այսօր ամենայն ինչ փոխարկեալ է․ բուռն հայրենասէրք անգամ կը պաղին օրաւուր, միով բանիւ ընդհանրուԹիւնը բոլորովին անտարբեր վիճակի մէջ է այսօր և համարեա՛ Թէ յուսահատ է հայրենեաց փրկուԹեան նկատմամբ, և իւր ձիգ ժամանակէ ի վեր փայփայած յոյսն ոչնչացած կը համարի։ Սակայն մեղադրելի չէ։ Մեք պէտք է այս պաղուԹեան և անտարբերուԹեան պատճառն քննեմք, որ սակայն պարզ է որպէս ցերեկ եԹէ հաճենամք լըրջօրէն քննել։

ԵԹէ խոկապէս միենոյն է իղձ և նպատակ մեր, բնա՛ւ և բնա՛ւ վայել չեն մեզ ո՛ և է կուսակցուԹեան բաժնուիլ, և ո՛չ միայն վայել չէ, այլ և չիք տարակոյս որ մեր այժմեան դրուԹեան մէջ կուսակցուԹեանց գոյուԹիւն մեծամեծ վնասներ կը պատճառեն հայրենեաց Դատին, որպէս պատճառել են արդէն, և դեռ աւելի մեծերն հետեւին քան զոր գործիչք մեր կարեն երեւակայել։

Մի բան չատ լաւ կարող եմք։ Մեր աշխատակցին —նոյն սպարիզում անձնուիրուԹեամբ մրցող ընկերին —բամբասել, նախատել, վար զարնել, սուտ հանել և ջանալ ամենայն ճգամբ վհատեցնել և վտարել ասպարէզէն։ Զոր ինչ Ա․․․եան կուսակցուԹիւն կը գրէ, Բ․․․եան սուտ կը հանէ և կը պախարակէ, և ինչ որ Գ․․եան կուսակցուԹեան օրգանն կը հրատարակէ՝ Բ․․․եան կամ Ա․․․եանն ժամանակ չէ կորսնցունել սուտ հանել և գետին տապալել նրան․ և այսպէս անխոհեմուԹեամբ ունայն տեղն ժամավաճառ կը լինին ձեռնհաս գործիչք մեր, մտքերն բոլորովին կը մոլորին լաբեւրինԹոսի մէջ, մինչ նոյն միջոցին անտէր և Թշուառացեալ Հայաստան կը տառապի և Թրքի ապականեալ տէրուԹիւն օգուտ կը քաղէ։

Ո՛չ, ազնիւ գործիչք, ազնիւ հայրենակիցք ո՛չ, այսպիսի ընԹացք վայել չեն մեզ․ յոյժ դատապարտելի կը լինիմք առաջի անաչառ պատմաբանին և առաջի սերնդոցն մեր։ Միանգամայն կը շեղիմք յուղղուԹենէ, եԹէ միակ նպատակի կը ծառայեմք, եԹէ ճշմարիտ սրտիւ հայրենեաց փրկուԹեան կը փափաքիմք, այլ է միջոց գործելոյ։ Ահագին է գործոյն մեծուԹիւնն, վասն որոյ պէտք և անհրաժեշտ է որ մեր գործունէուԹիւն և ուժերն ի մի կեդրոնացնեմք։ Ի սէր Թշուառ հայրենեաց և անտէր եղբարց մեր պարտիք է մեզ և անհրաժեշտ որ մեր ձեռնհաս և հայրենասէր գործիչք վարեն յինքեանց ո՛ և է անձնական կամ կուսակցական խէԹ կամ կագ, և «Եղբայր եմք մեք» ասելով ձեռք ձեռքի տան՝ միանան և այսպէս կեդրոնացնեն ուժերն։ Յայնժամ միայն կը գործեմք գիտակցաբար։ Յայնժամ իբր մի մարմին լեալ, իբր ահագի ոյժ մը կարող կը լինիմք մեր ձայն լսել տալ իշխանաւորաց․ վերջապէս յայնժամ միայն կարեմք յոյս ունենալ մեր արդար դատին յաղԹանակուԹեան։ Եւ երբ մեր իմաստուն, հաստատամիտ գործիչք միանան, նոցա ծրագրեր, իբր առաջնորդք ազգին, կը լինի, իւրեանց ազդեցիկ ուժովըն զօրեղապէս պահանջել ազգի իրաւանց իրագործումըն այն բոլոր տէրուԹիւններէն որք Պեռլինայ Վեհաժողովի Դաշնագիրն ձեռնագրել են։ Յայնժամ միայն կարելի է ազգի իրաւունքն ձեռք բերել՝ երբ ազգն ողջոյն միաբերան իւր առանձնաշնորհեալ իրաւունքն կը պահանջէ ի տէրուԹեանց։

«Հայք» ազգասէր ԹերԹն, որ խորապէս և չատ լաւ ըմբռնել էր խնդիրն երկու տարուց ի վեր ազդուապէս նոյնն ջատագովեց և մատնանիշ արաւ իբր միակ միջոց լուծումն տալու հայենական Խնդրոյն։ Նոյնն գրեցին և շատանք ոմանք Թէ՛ յօտար և Թէ՛ ի մեր գիտնոց և փորձառեալ անձանց։ Օ՜ն ուրեմն փուԹամք ցոյց տալ Թէ Հայքս, որ անմիաբան համբաւեալ եմք, կարող եմք հասարակաց վտանգի առաջ միանալ, և համերաշխուԹեամբ գործել։

Եւ եԹէ միացունելով կեդրոնացունեմք մեր գործունէուԹեան ուժերն, բոլորովին համոզուած եմ ես որ Ազգի և Հայրենեաց վերակենդանուԹեան ճգնաժամին ոչ տաղանդի, ոչ բազկի և ոչ ևս դրամոյ պակասուԹիւն կը լինի, այլ ամեն անհատ հայու ընծայաբերուԹիւն միանգամայն ա՛յլ ազդ կը լինի քան որ է այսօր։

Ի վերջոյ չկարեմ լուռ անցանել այն պարագայի վրայօք Թէ ի՞նչպէս կարելի է այսպիսի ծանր խնդիր, որպիսի է այսօր մեր ազգային խնդիր՝ հեշտուԹեամբ լուծուի մի՝ կամ երկուց և կամ երից անձնաւորուԹեանց ջանիւք և կամ խնդրանօք, լինին դոքա ամենաազդեցիկն։ Նոյնպէս և կարելի չէ միակ Հայրենասիրական ՄիուԹեան՝ ազգի իրաւանց դէԹ մի քաներրորդ մասն պահանջել և ձեռք բերել։ Ինչո՞ւ հողմոց վրայ կը դնեմք մեր յոյսն, ինչո՞ւ մեր բանականուԹիւն մեզ չեմք պիտոյացնել, ինչո՞ւ վերջապէս ժամ մի առաջ չեմք միանալ և գործի սկսիլ։ Մեծ անխոհեմուԹիւն կը անեմք եԹէ ապագային Թողումք զոր այսօր կարող եմք անել, անծանօԹ ապագային Թերեւս չատ ուշ լինի։ ԱնտարբերուԹեամբ կը սպասեմք միայն ուրեմն մինչ Լուր հասանի մեզ Թէ սուկալի հրդեհ մի կամ ահագին կոտորած մի կը սպառնայ ամայի անապատ դարձնել զՀայաստան, և յայնժամ բոլորքս միահաղոյն աղաղակ բառնամք։ ԵԹէ արդարեւ այսու յուսով ժամավաճառ կը լինիմք, այն ժամանակն այլ ևս հարկ չէ մեզ խռովիլ և փրկուԹեան յուսալ, վասն զի ուշ է և բոլորովին անօգուտ։ Այսօր է մեզ համար ժամն գործելոյ։ ԵրկաԹն պէտք է ծեծեմք որքան դեռ տաք է։

ԼՕԴԻՍ

ՄԻՈՒԹԻՒՆ

Տկա՛րք գիտեմ
Զօրաւոր են,
Երբ ընկեր են։

Շողն հանեց զշաղ ծաղկէն.
Շաղն անցաւ շողն իւր բովէն.
Այս երկուքն երբ միացա՛ն
Կազմեցին զծիածան։

Եկ դու լեր շաղ և ես շող,
Զիրար ի սէր գգուենք թող,
Գրկուիմք ելնեմք դէպ արև
Դու լինիս ամպ 'ւ ես անձրև։

Ցուռոյ ծաղկանց առզանք խանդ,
Վատ թշնամւոյն ճայթռեմք շանթ,
Միմեանց բերեմք դուրս ոյժ 'ւ երփ,
Է՞ր աննշան մնամք, ցերբ։

Միութիւնն է զօրութիւն,
Եկ միանանք եղբա՛յր, դուն,
Ես սիրեմ քո Հա՛յ անունդ
Թշնամւոյն սիրտ հանեմք թունդ։

Մեր Հայրենիքն է թշուառ,
Բարքս թշնամեաց են աւար.
Թուրքն կ'ըսէ «չիք կեանք Հայուն
'ւ ոչ պատիւ,» ի՛նչ կ'ըսես դուն։

Իբրև շող ու շաղ սկար,
Եկ միանանք Հայ եղբայր,
Ամպ արտասուաց ու արեան
Կազմենք երթանք Հայաստան։

Ընդ հառաչանս Հայոց անդ.
Շփուիմք, դառնամք, թափեմք շանթ.
Դրուիմք իբր նետ 'ւ աղեղ,
Ի ձեռս հզօր և անմեղ։

ԳԵՂԱՄ

ԱՌ
ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վասպուրական մեծ աշխարհին ծնունդ դու Տէ՛ր Խրիմեան,
Արժանապէս կոչեցար Հայր հանուր զարմէն Թորգոմեան.
Ցաւուրն յորում թօթովեցիր քո մայրենի սուրբ լեզուն,
Հայ ասացեր և Հայաստան և յայն կացեր միշտ միայն։

Անզուգական դու հայ Ոգի, մեր ամենուս սիրելի,
Քո հայրական պարտիք լցեր և դեռ պիտի լնուլի,
Ժողովրդեան դու մարդ էիր, ժողովրդեան յարեցար
Որով առիր ի Նոյանէ մի սպառուանուն պաշտելի,

Անշուշտ լինէր պիտի սրբեալ սարկաւթեան յաթոռից՝
Հայ ազգն համայն, թէ մկրտէր ի ջուրս աղբերց քո բանից,
Սակայն վասնզի ապականիչ ջրոց անցք շատ կուլ տուին
Կենսատու այդ բանից զբուխ, և չեհաս մերձ որբ ազգիս։

Քո յանկալի Սուրբ Սիօնին սրբավայրեր վերջ տուին
Մզմանն անձիդ անմատչելւոյդ յաքսոր 'ւ ի բանտ Մահատունին
Հոն կազմեցեր թեւս ի սլանալ յերկնաքաղաքն ի յերկիր
Բազմիլ ի Գահն լուսափառչեան առ ի լոյս ամլ վիրաւին։

Քրիստոսահաստ այն սուրբ գահուն արժանաւոր դու ժառանգ,
Վերահանդի՛ր յայդ բարձրութեան, ալ բաւ են քո վըտարանք.
Անդ մնասցես մինչև տեսցես լցեալ սրտիդ զղուրբ ուխտ.
Բռնակալին ալ չեն զօրեր ձեռք կերտել քեզ գելարանք։

Քո տիրական գաւազանաւդ տուր կեանք ազգիս Արամեան
Դու, նո՛ր Մովսէս աստուածառաք, բարձ մեր զսուգ բազմամեան.
Քև, Հայրապետ սրբազնափայլ, յէմիածնէն թող իջնեն
Լոյս փրկութեան ի հայազինս, որք պաշտեն զքեզ ԽՐԻՄԵԱՆ։

1892, Նոյեմբեր, 1 — ՅԱԿՈԲ Մ. ՀԱՃԵԱՆ
Նիւ Եորք, Ամերիկա

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեծանուն ռուսահայ նկարիչ Այվազովսքի, որոյ համբաւ քաղաքակիրթ աշխարհի ամեն կեդրոն հնչած է, այս տարի կ'ընէ իւր առաջին այցելութիւն ի Միացեալ Նահանգս։

Փռոֆէսէօռ Այվազովսքիի այս ուղևորութեան առիթն է Քոլոմպեան Ցուցահանդէսն, ուր, ռուսական կառավարութեան ծախիւք, իւր նկարներու քսանն կը յղուին։

75 տարեկան հասակին մէջ դեռ կայտառ նկարիչըն՝ Նիւակարայի ջրվէժն այցելելէ յետոյ վերադարձաւ ի Նիւ Եորք, ուր անխոնջ կը շարունակէ իւր աշխատութիւններ։ Արդէն նկարած է Նիւակարան, Ատլանտեան ովկէանն, և Արարատ լեռն։ Այս վերջին նկար, որ կը ներկայացունէ զարին հորիզոնին վերայ և զկրկին Մասիս կապուտակ լուսով ողողեալ, քան զամենայն ըղքանչելի թուեցաւ մեզ։ Նոյ նահապետ և իւրքն ներկայացուած են ի ստորև Մասեաց։

Փռոֆէսէօռ Այվազովսքի պիտի մնայ ի Նիւ Եորք ց1 Մարտի, ապա պիտի այցելէ Պոսթըն, Ուօշինկթըն, Ֆիլատէլֆիա, և՝ Ապրիլի վերջն՝ Շիքակոյ, ուր մի քանի օր անցունելէ յետոյ պիտի վերադառնայ յԵւրոպա։

Հռչակաւոր նկարիչն երբ յԱմերիկա գալու առթիւ Փարիզ էր հանդիպած, հոն ի պատիւ իւր ճաշ տրուած է, որպէս կը հաղորդէ Փարիզի Figaroն։

Տանպըրիէն կը գրեն մեզ, Նոյ. 6 թուականաւ.—
..................եան, ընիկ Պոլսեցի և որդի բարե յիշատակ .... աղայի, թուականէս չորս տարի առաջ Ամերիկայ ուղղակի մեզի եկաւ։ Իր հոս ժամանելէն առաջ մեր մօտակայ ազգականներէն որ ի Կ. Պոլիս՝ նամակներ ընդունեցինք, թէ .... դեռ տղայ հասակի մէջ իւր մօրմէն չափազանց երես առնելով և իր հայրը ցաւով ու վիշտով գերեզման դնելէ վերջ՝ սկսած է սանձարձակ և ամենայնի մի կեանք վարել։ Ճամբուն ծախը ճարճարակ ընելով ու Պոլէն փախցնելով մեր պաշտպանութեան կը յանձնեն զինքը. միանգամայն յիշեցնելով որ գոնէ միայն մէկ գիշեր մեր տան մէջ զինքը պատսպարէինք ու յաջորդ օրը իրեն յարմար գործ մի գտնելով ճամբայ դնենք։ Իսկ մենք քրիստոնէական կարեկցութեամբ և հայկական բարեմտութեամբ իւր աղետալի վիճակին վրայ խղճալով մեր ընտանեաց մէջ կ'ընդգրկենք, ամեն կերպով կը խնամենք, միանգամայն սիկար շինելու արհեստ կը սորվեցնենք իրեն։ Սակայն արուեստը սորվելէ ետև՝ մեր խաղաղիկ տունը այնպիսի խռովութեան մէջ ձգել ջանաց որ այլ ևս ան-

կորնչելի էր զինքը մեր տան ու որդւոյս գործարանին մէջ պահել։ Չորս ամիս չափ ուրիշ գործարաններ մանել ելնելէն, մեզ ընտանեօք անոր տար բամբասելէն և վաստակը անառակութեամբ մսխելէ ետև՝ վերստին իր ալաշանայը գիջանելով մեր գործարանը ընդունեցինք զինքը իւր խղճալի մօրը և քոյրերուն օգնելու պայմանաւ․ սակայն քիչ ատենէն նորէն ստիպուեցանք թողուլ և իր անտանելի բնաւորութեանը պատճառաւ չկրնալով ուրիշ գործարաններու մէջ ալ ընդունուիլ, Զախուրեանի քովէն ել ըսելով՝ անկէ ասկէ փոխ դրամ և ապրանք առնելով առանձին գործի սկսաւ, և այս միջոցին դիմակը բոլորովին վար առնելով ամեն երևակայելի անբարոյութեան կատարեց․․․։

այժմ խանութը, գործը և բոլոր պարտքերը թողած և Տէնպրի քաղաքէն անհետացած է։ Մայրը ու քոյրերը նամակ նամակի վրայ գրելով կաղաչեն որ ուր ըլլալը իմանալով իրենց իմաց տրուի։ Իսկ ես կ՚աղաչեմ որ իմ հայրենակիցներս այդ մարդակերպ ձիւաղէն զգուշանան։

Ո՛վ մայրեր ականջ դրէք Սողոմոն իմաստունի խօսքերուն։ «Բանի որ յոյս կայ՝ տղայդ խրատէ և անոր սպանելուն ականջ մի դներ» Առակաց ԺԹ Գլ․ 18 համար։ «Տղայէն խրատը մի կտրեր․ քանզի թէ որ զանիկա գաւազանով ծեծես՝ չմեռնիր․ դուն անիկա գաւազանով կը ծեծես, բայց անոր հոգին դժոխքէն կ՚ազատես» Առակաց ԻԳ Գլ․ 13 համար։

ԶՈՓՈՒՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի է կ՚ըսէ ԹԱՆ, թէ Իկնաթիէֆ կոմս, Ռուսիոյ կայսեր արքունի գործակալ, Հայոց կաթողիկոսի ընտրութեան համար այժմէն կը ջանայ յԵրուսաղէմ, ուստի պիտի տանի զԱր․ Խրիմեան, զկաթողիկոս ընտրել Էջմիածնի ժողովէն և վաւերացնել Ցարէն։ Ար․ Խրիմեան Կոստանդնուպոլսէն պիտի անցնէր ի Ռուսական Հայաստան երթալու համար, բայց Թուրք կառավարութիւնն, որոյ հետ գզգզուած էր երբ Թուրքիոյ Հայոց Պատրիարքն էր, խնդրած է իրմէ երթալ յիւր պաշտօնատեղին Թրիէսթի ճամբով։ Կը ծանուցուի թէ Ռուս կառավարութիւնն, յառաջ բերելով այն յոռի տրամադրութիւն զոր այս ընթացք կը պատճառէ Դրան հըպատակ Հայոց մէջ, խնդրած է օսմանեան կառավարութենէն յետս կոչել իւր այդ որոշումը։

—Սոյն Մկրտիչ կաթողիկոսն անցեալ տարի խորհուրդ յղացած է իւր թեմին մէջ հոգևորական ճեմարան մի հիմնել, և այդ խորհուրդ իրագործելու համար դիմած է Անգղիոյ Արքեպիսկոպոսին աջակցութեան։ Քէնթըրպըրիի արքեպիսկոպոսին խնդրանօք յանձնախումբ մի կազմուած է յԱնգղիա, և երկու եպիսկոպոսական երիցունք յատկապէս յղուած են ի Կիլիկիա՝ բուն տեղւոյն վերայ խնդիրն ուսումնասիրելու համար։ Պատուիրակք տեղեկագրած են թէ արդարև թեմին այլ եպիսկոպոսունք եւս համամիտ են Մկրտիչ կաթողիկոսին և այնպիսի ճեմարանի մի պէտքն կը զգացուի։ Ասոր վրայ Անգղիական եկեղեցին հաղորդակցութեան մտած է Ամերիկայի եպիսկոպոսականաց հետ, և վերջապէս որոշած են երկու եկեղեցիք միասին ալ օգնութեան կարկառել առ Հայ կաթողիկոսն, յղելով չորս ուսուցիչներ, որոց մին ամերիկացի, մին անգղիացի և երկուքն Հայ։ Կը լսեմք թէ ամերիկայի եպիսկոպոսական եկեղեցին կը բաղձայ իբրև հայ ուսուցիչ առաքել զՏիար Յ․ Յակոբեան, որ այժմ կ՚ուսանի եպիսկոպոսականաց ճեմարանին մէջ։ Հաւանական է որ յառաջիկայ 1893 տարւոյն մէջ սկսի վարժարանն, որոյ նիստն պիտի լինի ի Մարաշ։ Եկեղեցական այդպիսի վարժարան մի ի Կիլիկիա հիմնել շատ լաւ ձեռնարկ է, բայց չգիտեմք թէ Մկրտիչ կաթողիկոս Էջմիածնի կամ Կ․ Պոլսոյ հետ համախոհութեա՞մբ է որ կը ձեռնարկէ այդ գործին, թէ անկախօրէն։

—Մշակի մէջ կը կարդամք․ «Պեշտում Փրանսերէն լեզուով հրատարակվող Revue d'Orient լրագիրը իր վերջին համարներից մինում տպել է Ռաֆայէլ Պատկանեանի կարճառօտ կենսագրութիւնը, անուանելով նրան Հայոց Béranger։ Լրագիրը յիշեցնում է մի գերմանացի կրիտիկոսի կարծիքը հանգուցեալ Պատկանեանի բանաստեղծական գրուածների մասին։ Վերոյիշեալ քննադատն ասում է․ եթէ Պատկանեան իր կեանքի ամբողջ ընթացքում բաց ի Արաքսի Արտասուքը բանաստեղծական կտորից ուրիշ ոչ ինչ բան գրած էլ չլինէր,—Նա դարձեալ արժանի կը լինէր մեծ բանաստեղծի անունը կրելու։»

—«Արձագանք» կ՚ըսէ թէ այս տարի բելգիական միջազգային ցուցահանդիսում Թիֆլիսի գինեվաճառ Պ․ Յովհաննէս Օհանեանց ստացեր է ամենաբարձր պարգևը՝ ոսկի մետալ պատուաւոր դիպլոմով և առանձին նըշան կրծքին կրելու։

—Շնորհակալութեամբ ստացանք Փր․ Գ Խալաթեանի «քննութիւն»ն ի վերայ ԵՂԻՇԷի Վարդանանց Պատմութեան՝ հրատարակութեամբ Խ․ Յովհաննէսեանի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Սուլթան Համիտի անձնական բժիշկն, յոյն Մավրոյանի Փաշա, Փադիշահին մայրին առողջութեան նըկատմամբ անհաճոյ լուր՝ օտար պետութեան մի ներկայացուցչին հաղորդած լինելու կասկածով պաշտօնանկ եղած և յարքունիս արգիլուեր էր։ Յետոյ բժշկապետն՝ ընկերացած երեք պալատականներէ՝ տարուեր է Յունաց Պատրիարքին առջև և Ս․ Աւետարանին վերայ երդում ըրեր է, ի ներկայութեան պալատականացն, թէ երբէք բան գրած չէ Սուլթանին դէմ։ Նաև հաւատարմութեան երդում ըրած է։ Այս գործողութեանց արձանագրութիւնն ստորագրեալ տարուած է յարքունիս, և յաջորդ օրն իսկ Մավրոյանի փաշան ներողութեան արժանանալով՝ վերահաստատուեր է իւր պաշտօնի մէջ։

—Սթամպուլ կ՚ըսէ թէ Քրուփի վաճառատունն մեծ թնդանօթներու նոր յանձնարարութիւն մի կը սպասէ ընդունիլ Կոստանդնուպոլսէն։ Նոր թնդանօթք պիտի ծառայեն նեղուցներուն պաշտպանութեան։

—Զօրավար Գոխալմն Անդրիանուպոլիս յղուած է քաղաքին ամրութիւններն քննելու համար։

—Դուռն կը շարունակէ խուզարկել գողութեան դէպքն որ չորս եւրոպեան պետութեանց դիւանագիտական թղթակցութիւններուն գլխուն եկած էր։ Դեսպանք կը սպասեն, գործին ետևէ լինալու համար, որ քննութիւնք աւարտին։

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Ի՞նչ է աղջիկ մը․

—Առանց հասցէի կնքուած նամակ մի, որուն տէր ըլլալ ուզողը հասցէն իւր անունը կը գրէ։

Տամ բային խոնարհումը

Տօլանարճի մը կուտամ կ՚ըսէ,
Սնանկացեալ մը կուտայի կ՚ըսէ,
Պաթախճի մը տուի կ՚ըսէ,
Աղքատը պիտի տամ կ՚ըսէ,
Կղերը տուր կ՚ըսէ,
Հարուստը տամ կ՚ըսէ։

Ցակոգ Էքիզեան
348 Fountain Street
Providence R. I. U. S. A.

Կարապետ Էքիզեան
28 South Margin Street
Boston, Mass

ԷՐԻԶԵՆ ԵՂԲԵՐՔ

Յովհաննէս Էքիզեան
57 CaManTo Hann,
Constantinople, Turkey.

Գէորք Էքիզեան
Harpoot
Turkey in Asia.

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գինուորական կրթութեան։ բաղում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ր.

RONOFF & OLDSEN
FINF CUSTOM TAILORS
And Dealers in
GENT'S FURNISHINGS
ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ
214 Main St.
WORCESTER MASS.

A. A. McLAUGHLIN
137 MAIN ST.
WORCESTER. MASS.

Եւ բաղում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն շաբաթ երեկոյ հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատան մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերուն կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գլխարկ, վերարկու, սոնազգեստ (փանթալոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way 46 և 47դ Փողոցներուն միջեւ Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակաթեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանատերերուն։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցուցնել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն։

RIPANS TABULES

RECULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, . NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.
ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԳՍ ՊԷՆՔ
Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբերի կէսէն հաշուելով։

Հայե՛ր
Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան։

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱՊԻՐՔ
(հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 դդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ